ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/113, 26.10.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Մեծն Էրիկ» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/1» հրատապ բաց մրցույթ

Գնման առարկան՝ Նոր Գեղիի ակադեմիկոս Գ.Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ ՊՈԱԿ-ի վերակառուցման աշխատանքների ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝ Արձանագրության կետ 1.1-ով մասով «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի գրառումը՝ գումարների հանրագումարը ընդհանուր գնի գումարին չհամապատասխանելու մասով – պատշաճ և հիմնավոր չէ և ենթակա է արձանագրությունից հեռացման, իսկ կետ 1.3-ի՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով՝ հայտը մերժելու որոշումը բոլորովին հիմնավորված չէ և ենթակա է չեղարկման:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՄԵԾՆ ԷՐԻԿ

26 հոկտեմբերի 2020թ.

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝
պարոն ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆԻՆ
հասցե՝ ՀՀ ք. Երևան Կոմիտաս 54^{Բ}

ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔ

Հարգելի պարոն Օհանյան,

Սույնով .«Մեծն Էրիկ» ՍՊԸ-ը հայտնում է, որ՝

- Պատվիրատուն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, 4-րդ հարկ հասցեում;
- Գնահատող հանձնաժողովի 2020թ. Սեպտեմբերի 8-ի թիվ 1 որոշմամբ հայտարարվել է հրատապ բաց մրցույթ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/1 ծածկագրով *(մրցութային փաթեթի Հրավերի 1-ին էջում ծածկագիրը սխալմամբ նշված է ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/11)* Կոտայքի մարզի Նոր Գեղիի «Ակադեմիկոս Գ. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի վերակառուցման;
- .«Մեծն Էրիկ» ՍՊԸ-ը մասնակցել է նշված մրցույթին և հաստատված կարգով և ժամկետում ներկայացրել է իր համապատասխան մրցութային Հայտը;
- Գնահատող հանձնաժողովը 2020թ. հոկտեմբերի 8-ի Արձանագրություն 2-2 –ով, կետ 1.1-ով «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի մասով արձանագրել է հետևյալը (մեջբերում).

  - Մասնակցի գնային առաջարկում արժեք և ԱԱՀ սյունյակների և տառերով, և թվերով գրված գումարների հանրագումարը չի համապատասխանում ընդհանուր գինը սյունյակի տառերով գրված գումարին,

  և այս հիմնավորմամբ, նույն արձանագրության կետ 1-3 –ով կայացրել է հետևյալ որոշումը (մեջբերում).

  - «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Սույնով .«Մեծն Էրիկ» ՍՊԸ-ը հայտնում է իր միանշանակորեն անհամաձայնությունը գնահատող հանձնաժողովի վերը նշված արձանագրության հիմնավորումների և որոշման հետ, և ներկայացնում է իր **բողոքը**.

Արձանագրություն 2-2-ի **կետ 1-1-ի՝ գումարների հանրագումարը ընդհանուր գնի գումարին չհամապատասխանելու մասով,** ինչպես նաև **կետ 1-3-ի՝** ***հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով՝ հայտը մերժելու որոշման մասով.***

Մեր մրցութային հայտում այդ թվերն են. 1 066 809 786 + 213 361 957 = 1 280 171 744, որտեղ երևում է, որ առկա է 1 (մեկ) դրամի տարբերություն: Իրականում այդ թվերը հետևյալ կլորացված թվերն են. 1 066 809 786,4 + 213 361 957,3 = 1 280 171 743,7, ինչում գնահատող հանձնաժողովը դյուրին կերպով կարող էր ստուգել հայտի հետ միաժամանակ ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի excel տարբերակի ստուգմամբ: Իսկ թվերի նշված կլորացումը մեր կողմից կատարվել է Մրցութային Հրավերի ՄԱՍ I; 5. ՀԱՅՏԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ; կետ 5.2 -ի պահանջի համաձայն, որտեղ բառացի ասվում է (2-րդ պարբերությունից). .*«Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումը իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման:* ***Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝***

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով ***նշված գումարների լումաները կլորացված են*** *մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը.»*

Միաժամանակ, Մրցութային Հրավերի ՄԱՍ I; 8. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ՝ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ և ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ; կետ 8.4 -ի պահանջի համաձայն, որտեղ բառացի ասվում է հետևյալը.

.«Ընտրված մասնակիցը որոշվում է՝

*Բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է **առանց** սույն հրավերի 1-ին մասի 5.2-րդ կետում նշված **հարկի գումարի հաշվարկման,** իսկ հայտերը գնահատելիս **հիմք է ընդունում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:***

Հետևաբար, **տվյալ բողոքի պահանջն է - Արձանագրության կետ 1.1-ով «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի մասով գրառումը՝ գումարների հանրագումարը ընդհանուր գնի գումարին չհամապատասխանելու մասով – պատշաճ և հիմնավոր չէ և ենթակա է արձանագրությունից հեռացման, իսկ կետ 1-3-ի՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով՝ հայտը մերժելու որոշումը բոլորովին հիմնավորված չէ և ենթակա է չեղարկման:**

Մենք կարծում ենք որ մեր հայտը ենթակա չէ մերժման և խնդրում ենք ուսումնասիրել սույն բողոքը՝ իր պահանջով:

Տնօրեն՝ Լևոն Շահումյան

МЕЦН ЭРИК
Общество с ограниченной ответственностью
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
0061 г. Ереван, пр. Аршакуняц 67/15
3108 г. Гюмри, ул. М. Хоренаци 60/1

Սահմանափակ պատասխանատվությամբ
Ընկերություն
Հայաստանի հանրապետություն
0061 թ. Երևան Արշակունյաց պող. 67/15
3108 թ.Գյումրի Մ. Խորենացի 60/1

METSN ERIK
Limited Liabiliti Company's
REPUBLIK OF ARMENIA
0061 Erevan Arshakunyats ave. 67/15
3108 Gyumri, M. Khorenatsi st. 60/1

fax (0312) 3-27-09 (010) 44-43-66
E-Mail: metsnerik@yandex.ru